ԱՐՄԻՆԻԱՅԻ ԱՐԱԲ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում արաբների իշխանությունը Հայաստանում ներկայացված էր ոստիկանների միջոցով, որոնց հիմնական պարտականությունն էր երկրի հնազանդեցումն ու պաշտպանությունը, տուրքերի կանոնավոր գանձման հսկողությունը և Հայաստանի հողի վրա հաստատված մահմեդական գաղութների անմիջական կառավարումը։

Արաբական տիրապետության շրջանում հայերը Հայաստանի արաբ կառավարիչներին տարբեր անուններ են տվել։ Հրամանատար-զորավար, վերակացու և նույնիսկ մարզպան։ Արաբները նահանգների կառավարիչների համար այդպիսի հատուկ բառ չունեին՝ մերթ կոչում էին ամիր, մերթ վալի և մերթ համել։ Հայկական մատենագրության մեջ Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում առաջին անգամ ոստիկան բառն օգտագործում է Հովհաննես Դրասխանակերտցին։ Դվինի միջնաբերդում ոստիկանն ուներ իր պալատը, որն արաբները կոչում էին «տար էլ իմարաթ»։

Անցյալում Հայաստանի ոստիկանների ցուցակը կազմելու մի քանի փորձեր են կատարվել։ Դրանցից կարևորներն են Մ. Ղազարյանի, Ժ. Լորանի, Ռ. Ֆասմերի և Հ. Նալբանդյանի կազմած ցուցակները։ Հայաստանում կառավարած արաբ ոստիկանների ժամանակագրության ճշտման գործում մեծ ավանդ ունի նաև Ա. Տեր-Ղևոնդյանը։

Մ. Ղազարյանը[1], հենվելով Յակուբիի պատմության վրա, կազմել է իր ցանկը։ Սակայն անդրադառնալով Յակուբիի պատմությանը, նկատում ենք, որ նա շատ համառոտ է խոսում Օմայանների շրջանի մասին և դրա համար քիչ թվով ոստիկանների անուններ է հիշատակում, իսկ Ռաշիդիների շրջանի ոստիկանների մասին ոչ մի հիշատակություն չունի։ Նա իր պատմության մեջ շեշտն ավելի շուտ դրել է Աբբասյան շրջանի վրա և դրա համար այդ շրջանի ոստիկանների անուններն է հիշատակում։ Այդ է պատճառը, որ Մ. Ղազարյանի ցանկը թերի է։ Իսկ Ռ. Ֆասմերը[2], թեև օգտագործել է պատմական աղբյուրները և բրամադիտական նյութերը, բայց նրա ցանկը սկսվում է 750 թվականից, որտեղ հիշատակված են միայն Ալ-Ամինի և Ալ-Մամունի օրոք Հայաստանի վրա իշխող ոստիկանների անունները։ Այդ պատճառով էլ այդ ցանկը նույնպես թերի է։

Եղած ցանկերից ամենաամբողջականը կարելի է համարել Հ. Նալբանդյանի[3] կազմածը, որովհետև նա օգտագործել է ավելի շատ աղբյուրներ, քան նախկին հեղինակները։ Նա հայկական աղբյուրների կողքին օգտագործել է նաև արաբ հեղինակներից շատերի գործերը, բայց, չնայած դրան, թույլ է տվել մի շարք թերություններ, որոնցից ամենակարևորն այն է, որ Հ. Նալբանդյանն իր ցանկը սկսում է Աբդել Մալիք խալիֆի ժամանակներից, երբ նա իր եղբորը՝ Մուհամմեդ իբն Մրվանին, ուղարկում է Արմինիա, որպես կառավարիչ (ոստիկան)։

Անդրադառնալով Բալաձորիի և Իբն Ֆաքիհի բնագրին, Ադիբ ալ Սայեղի պատմությանը[4] և Ալ-Բուսթանիի հանրագիտարանի տված ցանկին, որից օգտվել է Մարվան էլ-Մտավարը[5], տեսնում ենք, որ Արմինիան, նախքան Մուհամմեդ իբն Մրվանը, ունեցել է մի քանի ոստիկաններ, որոնց Հ. Նալբանդյանն անտեսել է։ Միևնույն ժամանակ, նրա կազմած ցանկի մեջ հանդիպել ենք ոստիկանների անունների, որոնք փաստորեն վերոհիշյալ արաբական

---

[1] M. Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903.

[2] Ռ. Ֆասմեր, Ժամանակագրություն Հայաստանի ոստիկաններու Ալ-Արմին եւ Ալ-Մամուն խալիֆների օրով (Հանդէս ամսօրեայ, 1929, № 10—11, էջ 650—667)։

[3] Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1956, № 8, էջ 105—124)։

[4] Ադիբ ալ Սայեղ, Հայաստանը արաբական պատմության մեջ, Բեյրութ, 1972 (արաբերեն)։

[5] Մարվան էլ-Մտավար, Հայերը պատմության մեջ, Բեյրութ, 1982 (արաբերեն)։

աղբյուրներում չկան, եվ մեզ այնպես էլ չհաջողվեց պարզել, թե Հ. Նալբանդյանն ինչ աղբյուրների հիման վրա է կազմել իր վերոհիշյալ ցանկը, որն ունի հետեւյալ պատկերը.

1. Օմար իբն ադբ ալ-Ազիզ 717—720 թթ.
2. Արդալլահ իբն Մուհամմադ 750 թ.
3. Հարուն 780—786 թթ.
4. Յահյա իբն Խալիդ ալ-Բարմաքի
5. Սուլեյման 788—790 թթ.
6. Աբու Սաբահ և միաժամանակ Սայիդ իբն Մուհամմեդ ալ Հարան ալ Լահրի 793 թ.
7. Խալեդ իբն Եզիդ իբն Ուսայդ աս-Սուլամի
8. Նահր իբն Հարիբ ալ-Մուհալլաբի 799 թ.
9. Յահյա իբն Զուֆար 808 թ.
10. Խալեդ իբն Եզիդ իբն Մաղյադ ալ-Շայբանի 813 թ.
11. Մուհամմադ իբն Արդալլահ ալ-Քալբի 823 թ.
12. Արդուլլա իբն Առադ 825—826 թթ.
13. Աբդել Ռահման իբն Խաքան 833 թ.
14. Իբրահիմ 856 թ.
15. Մուիդ։

Դիմելով Բալաձորիին և Իբն Ֆաքիհին, տալիս ենք այն ոստիկանների անունները, որոնք իշխել են Հայաստանում Օսման իբն Օֆֆանի օրոք։

1. Հուզեյֆե իբն Ալ-Յաման ալ-Աբս 652 թ.
2. Ալ Մուղիրե իբն Շուբե
3. Ալ Քասեմ իբն Ռաբիա իբն Ումեյե իբն Աբի Ալի-Սուլթ ալ-Սաքաֆի։

Այստեղ Բալաձորին տատանվում է որոշել, թե ով է եղել Ալ-Սաքաֆիի հաջորդը։ Նա գրում է. «Ասում են, որ Օսմանը Հայաստանի կառավարիչ նշանակեց Ամրու իբն Մուավիա իբն Ալ-Մունթեֆեք ալ Ուքեյլիին, իսկ ուրիշներն ասում են, որ Օսման խալիֆան Մուղիրեից հետո նշանակեց էլ-քելբի ցեղից մի մարդու (որի անունը չի հիշատակում), որը իշխել է Արմինիայի վրա 15 տարի և որից հետո կառավարիչ է նշանակել Ալ-Օքեյլիին»[6]։ Քանի որ Բալաձորին չի հիշատակում քելբի ցեղի կառավարչի անունը, դիմեցինք նաև այլ աղբյուրների, որտեղ նույնպես որևէ հիշատակություն չգտանք նրա մասին։ Դրա համար այս տեղեկությունը հավաստի չի կարող դիտվել։

Օսման Խալիֆի հաջորդ Ալի Իբն Աբի Թալեբի օրոք Արմինիայի կառավարիչ էր նշանակվել Ալ-Աշաաս Իբն Քայսը։ Իսկ Մուավիայի կողմից Արմինիայի կառավարիչ նշանակվեց Արդուլլա Իբն Հաթեմ Իբն Ալ-Նումեն Իբն Ամրու Ալ-Բահիլին։ Երբ վերջինս մեռավ, Մուավիան նրա փոխարեն կառավարիչ նշանակեց եղբորը՝ Աբդել-Ազիզ Իբն Հաթեմ Իբն Ալ-Նումենին։ Ըստ Բալաձորիի, այս կառավարիչը նորոգեց Դվին քաղաքը և ամրացրեց նրա պաշտպանական կառույցները, մեծացրեց մզկիթն ու վերակառուցեց Նախիջևան քաղաքը։ Նա վերանորոգեց նաև Պարտավ քաղաքը և նրա շուրջը պաշտպանական արգելքներ կառուցեց։ Բացի այդ, նա նորոգեց նաև Փայտակարան քաղաքը[7]։ Բալաձորին տատանվում է որոշելու, թե Աբդել Ազիզ Իբն Նումենը Արմինիայի կառավարիչ է եղել Մուավիայի կամ Աբդել Մալեքի օրոք, թե ոչ։ Այս կապակցությամբ նա գրում է. «Վակիտին ասաց. «Աբդել Մալեքը կառուցեց Պարղաան Հաթեմ Իբն Ալ-Նումեն Ալ-Պահիլի կամ նրա որդու ձեռքով»[8]։

Ապա Աբդել Մալեքն Արմինիայի կառավարիչ նշանակեց Օսման Իբն Ալ-Ուալիտ Իբն Օքբա Իբն Աբի Մուիդին, որից հետո Արմինիայում ապստամբություն սկսվեց։ Այն ճնշելու համար Աբդել Մալեքն իր եղբորը՝ Մուհամմեդ Իբն Մրվանին, նշանակեց Արմինիայի կառավարիչ և ուղարկեց Արմինիա։ Հենց այստեղից սկսվում է Հ. Նալբանդյանի կազմած ցանկը։ Հ. Նալբանդյանը Մուհամմեդ Իբն Մրվանից հետո դրել է Աբդուլլա անունը։ Այս անձնավորության անունն աղբյուրներում հիշատակված չէ։ Եթե նա այս անունով ակնարկում է Բալաձորիի հիշատակած Արդուլլա Իբն Հաթեմ Ալ-Բահիլիին, ապա սխալվում է, այն դնելով Մուհամմեդ Իբն Մրվանից հետո, ինչպես որ սխալվել էր՝ դնելով Օսման Իբն Ալ-Ուալիտ Իբն Օքբա Իբն Աբի Մուիդին և Աբդել Ալ-Ազիզ Իբն Հաթեմ Ալ-Բահիլիի

---

6 Բ ա լ ա ձ ո ր ի, Երկրների նվաճումը, Բեյրութ, 1978 (արաբերեն)։
7 Նույն տեղում։
8 Նույն տեղում։

անունները Մրվան Իբն Մուհամմեդից հետո։ Ըստ Բալաձորիի պատմության, վերոհիշյալ երեք ոստիկանները Հայաստանի վրա իշխել են նախքան Մուհամմեդ Իբն Մրվանը։

Դառնալով վերն ասվածին, կազմենք մի նոր ցանկ՝ մինչև Հ. Նալբանդյանի ցանկի առաջին անվանը հասնելը, որն է Մուհամմեդ Իբն Մրվանը։ Նկատենք նաև, որ արաբ պատմաբանները տվել են միայն Հուզեյֆե Իբն Ալ-Յաման Ալ-Աբսի իշխանության թվականը, իսկ մնացյալ ոստիկանների իշխանության թվականները, որոնք իշխել են Օսմանի օրոք, հայտնի չեն։ Սակայն նկատի առնելով, որ Օսման խալիֆը սպանվել է 653 թ., առաջին չորս ոստիկանները պետք է իշխած լինեին 652—653 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում։ Հավանաբար պատմաբանները չեն կարողացել նշել նրանց իշխանության հաստատ թվականները, քանի որ նրանք, ինչպես նկատում ենք, իշխել են հաջորդաբար՝ մի տարվա ընթացքում։ Այդ ոստիկաններն են՝

1. Հուզեյֆե Իբն Ալ-Յաման Ալ-Աբսի՝ 652 թ.
2. Ալ-Մուղիրե Իբն-Շուբե
3. Ալ-Քասեմ Իբն Ռաբիա Իբն Ումեյե Իբն Աբի-Սուլթ Ալ-Սաքաֆի
4. Ամրու Իբն Մուավիա Իբն Ալ-Մունթեֆեք Ալ-Ուքեյլի

Հետագայում, այսինքն 653 թ. հետո Ալի Իբն Աբի Թալեբի օրոք Արմենիայի առաջին ոստիկանը եղել է՝

5. Ալ-Աշաաս Իբն Քայսը՝ 653 թ.

իսկ Մուավիայի օրոք՝

6. Արդուլա Իբն Հաթեմ Իբն ալ Նումեն Իբն Ամրու Ալ-Բահիլին՝ 661 թ.
7. Աբդել Ազիզ Իբն Հաթեմ Իբն Ալ-Նումեն՝ 662 թ.

Աբդել Մալեքի օրոք՝

8. Օսման Իբն Ալ-Ուալիտ Իբն Օքբե Ալի Մուֆտը՝ 693 թ.
9. Մուհամմեդ Իբն Մրվանը՝ 693—709 թթ.

Շարունակում ենք ոստիկանների ցանկը, օգտագործելով Իբն Ֆաքիհի, Իբն Ալ Ասիրի, Յակուբիի և Ալ-Բուսթանի հանրագիտարանի, Ադիբ Ալ Սայեղի տվյալներն ու Ֆուատ Հասան Հաֆեզի[9] ցանկը, որից ստացվում է հետևյալ հաջորդականությունը.

10. Մասլամա Իբն Աբդել Մալեք
11. Աբուշայխ Իբն Արդուլլա՝ 701—703 թթ.
12. Մասլամա Իբն Աբդել Մալեք՝ 715 թ.

Սուլեյման Իբն Աբդել Մալեքի օրոք՝

13. Աղե Իբն Աղե Իբն Ումեյթե Ալ-քինդի՝ 715—717 թթ.

Յեզիդ Իբն Աբդել Մալեքի օրոք՝

14. Օմար Իբն էլ Հուբեյրե՝ 720—721 թթ.
15. Մասլաք Իբն Սաֆար Ալ-Բահրանի՝ 721 թ.
16. Ալ-Հարես Իբն Ամրու Ալ-Թաի՝ 724—725 թթ.
17. Մասլամա Իբն Աբդել Մալեք՝ 725 թ.
18. Ալ-Ջառահ Իբն Արդուլլա Ալ-Հաքիմի՝ 729 թ.
19. Հաշաշ Իբն Արդուլլա՝ 730թ.

Հիշամ Իբն Աբդել Մալեքի օրոք՝

20. Սաիդ Իբն Ամրու Իբն Ասուաղ Ալ-Հարաշի՝ 730—731 թթ.
21. Մասլամա Իբն Աբդել Մալեք՝ 731—732 թթ.
22. Մարվան Իբն Մուհամմեդ՝ 732—744 թթ.
23. Ասեմ Իբն Արդուլլա Իբն Յազիդ Ալ Հիլալի՝ 744 թ.
24. Իսհակ Իբն Մուսլիմ Ալ-Օքեյլի 745 թ.
25. Մուստաֆեր Ալ-Քասաբ (Քեսիր) 745—750 թթ.։

Այս ցանկը պարունակում էր Ռաշիդիների և Օմայանների օրոք Հայաստանի արաբ ոստիկանների անունները։ Աբբասյան շրջանի արաբ ոստիկանների ցանկի ճշգրտման համար դիմել ենք վերոհիշյալ աղբյուրներին և, դրանք համեմատելով Հ. Նալբանդյանի ցանկի հետ, նկատել ենք, որ դրանք հիմնականում համընկնում են։

---

9 Ֆուատ Հասան Հաֆեզ, Հայ ժողովրդի պատմություն սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986, էջ 244 (արաբերեն)։

Աբբասյան շրջանի ոստիկանների ցանկը

1. Մուհամմեդ իբն Սուլ՝ 749—750 թ թ.
2. Աբու Ջաֆար Ալ-Մանսուր՝ 750—754 թթ.
3. Սալեհ իբն Սուբայհ ալ-Քինդի՝ 751 թ.
4. Յազիդ իբն Ուսայդ Ալ-Սուլամի՝ 754 թ.
5. Հասան իբն Քահթաբա՝ 754—759 թ թ.
6. Յազիդ իբն Ուսայդ Ալ-Սուլամի՝ 759—770 թ թ.
7. Բաքար իբն Մուսլիմ Ալ-Օքեյլի՝ 770—771 թ թ.
8. Հասան իբն Քահթաբա՝ 771—775 թ թ.
9. Ուադեհ Ալ-Աբսի՝ 775 թ.
10. Յազիզ իբն Ուսեյդ՝ 755—780 թ թ.
11. Օսման իբն Ամարա իբն Խուրեյմ՝ 781—785 թ թ.
12. Ռուհ իբն Հաթեմ Ալ-Մուհելբի՝ 785—786 թ թ.
13. Խուզեյմա իբն Հազեմ՝ 786—787 թ թ.
14. Յուսուֆ իբն Ռաշիդ Ալ-Սուլամի՝ 787 թ թ.
15. Յազիդ իբն Մազյադ Ալ-Շայբանի՝ 787—788 թթ.
16. Ուբայդ Ալլա իբն Ալ-Մահդի՝ 788—790 թ թ.
17. Աբդել Քաբիր իբն Աբդալլա Աբդել Համիդ Ալ-Խաթաբ Ալ-Ազաուի՝ 791 թ.
18. Էլ Ֆաթել իբն Յահյա Ալ-Բարմաքի՝ 793—794 թթ.
19. Օմար իբն Այուբ էլ-Քինանի՝ 793 թ.
20. Ալ Աբաս իբն Ջաբիր՝ 794 թ.
21. Մուսա իբն Իսա՝ 794—795 թ թ.
22. Յահյա էլ-Հաբաշի՝ 795 թ.
23. Ահմեդ իբն Յազիդ իբն Ուսեյդ Ալ-Սուլամի՝ 795 թ.
24. Սաիդ իբն Մուսլեմ իբն Քութեյբեհ էլ-Բահիլի՝ 797—799 թթ.
25. Ալի իբն Իսա իբն Մահան՝ 799 թ.
26. Յազիդ իբն Մազյադ Ալ-Շեյբանի՝ 799—801 թ.թ.
27. Ասադ իբն Յազիդ իբն Մուսյադ Ալ-Շեյբանի՝ 801—802 թ թ.
28. Մուհամմեդ իբն Յազիդ իբն Մազյադ՝ 802—803 թ թ.
29. Խուզեյմա իբն Խազեմ Ալ-Թամիմի՝ 803—806 թ թ.
30. Սուլեյման իբն Յազիդ Ալ-Ամիրի՝ 807 թ.
31. Ալ Աբաս իբն Ջաֆար Ալ-Հիլալի՝ 808 թ.
32. Մուհամմեդ իբն Ջուհեյբ Ալ-Տուբի՝ 809 թ.
33. Ասեդ իբն Յազիդ իբն Մազյադ՝ 809—811 թ թ.
34. Իսհակ իբն Սուլեյման Ալ-Հաշիմի՝ 811—813 թ թ.
35. Ալ Ֆադել Իսհակ իբն Սուլեյման՝ 811—813 թ թ.
36. Թահեր իբն Մուհամմեդ Ալ-Սանյանի՝ 813 թ.
37. Աբդել մալեք իբն Ջահաֆ Ալ-Սուլամի՝ 813 թ.
38. Սուլեյման իբն Ահմեդ իբն Սուլեյման Ալ-Հաշիմի՝ 813 թ.
39. Ալ Աբաս իբն Ջաֆար Ալ-Հիլալի՝ 813 թ.
40. Աբու Աբդալլա՝ 814 թ.
41. Հաթեմ իբն Հարթամա Ալ-Այան՝ 817—819 թ թ.
42. Յահյա իբն Մուհամմեդ իբն Մուսլեմ՝ 819—820 թ թ.
43. Իսա իբն Մուհամմեդ իբն Աբու Խալեդ՝ 820—823 թ թ.
44. Զուբայր իբն Ալի իբն Սադաքա Ալ-Ազդի՝ 824—825 թ թ.
45. Մուհամմեդ իբն Համիդ Ալ-Թուսի՝ 827—829 թ թ.
46. Աբդուլլա իբն Թահեր՝ 829 թ.
47. Աբդուլլա իբն Ահմեդ իբն Յահյա իբն Ուսեյդ Ալ-Սուլամի՝ 829 թ.
48. Խալեդ իբն Մազյադ Ալ-Շեյբանի՝ 829 թ.
49. Աբդուլլա իբն Մուսաադ Ալ-Ազդի՝ 832 թ.
50. Ալի իբն Աբդալլա՝ 832 թ.
51. Հասան իբն Ալի Ալ-Պազազիսի՝ 833—835 թ թ.
52. Ալ Աֆշին Հայդար իբն Քաուս՝ 835 թ.
53. Մուհամմեդ իբն Սուլեյման Ալ-Ազդի Ալ-Սամարքանդի՝ 835—837 թ թ.

54. Մուհամմեդ իբն Խալեդ Բախարխուդե՝ 839 թ.
55. Ալի իբն Ալ-Հուսեյն իբն Սիբա Ալ-Քեյսի՝ 840 թ.
56. Խալեդ իբն Յազիդ իբն Մազյադ Ալ-Շեյբանի՝ 841 թ.
57. Ալի իբն Ալ-Հուսեյն իբն Սուրհ Ալ-Քեյսի՝ 841 թ.
58. Համուդիե իբն Ալի իբն Ֆադել՝ 841 թ.
59. Խալեդ իբն Յազիդ իբն Մազյադ՝ 842—845 թ թ.
60. Մուհամմեդ իբն Խալեդ՝ 845—849 թ.թ.
61. Մութազ Բիլահ՝ 849 թ.
62. Աբու Սայիդ Մուհամմեդ իբն Յուսուֆ Ալ-Մարվազի՝ 849—851 թ թ.
63. Յուսուֆ իբն Աբու Սայիդ Մուհամմեդ Ալ Մարվազի 851—852 թ թ.
64. Բուղա Էլ-Քեբիր՝ 852—855 թ թ.
65. Մուհամմեդ իբն Խալեդ Ալ Շեյբանի՝ 857 թ.
66. Աբու Ալ-Հասան Ալի իբն Յահյա Ալ-Արմանի՝ 862—863 թ թ.
67. Ալա իբն Ահմեդ Ալ-Ազդի՝ 865—866 թ թ.
68. Իսա իբն Ալ-Շեյխ Ալ-Շեյբանի՝ 870 թ.
69. Ջաֆար ալ-Մուֆաուիդ՝ 875 թ.
70. Մուհամմեդ իբն Խալեդ իբն Յազիդ իբն Մազյադ Ալ-Շեյբանի՝ 878 թ.
71. Իսհակ իբն Կոնդաջիկ՝ 879 թ.։

Աբու Ալ-Յահյա Արմանիից հետո հիշատակված վերոհիշյալ հինգ ոստիկաններն Արմենիայում փաստացի իշխանություն չունեին, քանի որ իշխանության բոլոր ֆունկցիաներն այդ ժամանակ, գոնե Հայաստանում, անցել էին Աշոտ իշխանաց իշխանին։

Արմենիայի արաբական ոստիկանների հիշյալ հաջորդական ցանկը, ինչպես նաև նրանց կառավարման թվականները երբեմն ճշգրիտ չեն և հետագայում, անշուշտ, կսրբագրվեն ու կլրացվեն։

Մ. Մ. ԲԻԹԱՐՅԱՆ